ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի <<Նորապատի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ-ի <<Ֆիզկուլտուրա>> (9 դասաժամ), <<Տեխնոլոգիա>> (4 դասաժամ), <<Կերպարվեստ>> (1 դասաժամ),<<Ինֆորմատիկա>> (7 դասաժամ), առարկաների ուսուցիչների թափուր տեղերի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Հաստատության ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

Մրցույթի մասնակիցների գիտելիքներն ու մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար մասնակիցը տնօրենի կողմից նշանակված պատասխանատու աշխատակցին է ներկայացնում՝

1) դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3X4 չափսի,
2) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
3) անձը հաստատող փաստաթուղթ,
4) «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,
5) ինքնակենսագրություն (Ձև 5),
6) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
7) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

9) որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակի հետ:

Փաստաթղթերն ընդունվում են 2021թ. նոյեմբերի 11-ից 24-ը ներառյալ, ամեն օր ժամը 10^{00}-ից մինչև 14^{00}-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից՝ Նորապատի միջնակարգ դպրոցում:

Մրցույթը տեղի կունենա 2021 թվականի դեկտեմբերի 01-ին, ժամը 14^{00}-ին՝ Նորապատի միջնակարգ դպրոցում:

Հասցե՝ գ. Նորապատ 7-րդ փողոց 32 շենք:

Տեղեկությունների համար զանգահարել 098577300 հեռախոսահամարով:

ՀՀ Արմավիրի մարզի

<< Նորապատի միջնակարգ դպրոց>>

ՊՈԱԿ տնօրենություն